

ԱՆՍԱՄՆԱՊԱՀՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՍԱՄՆԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ.

## ՄԵԾ ԵՂՋԻՒԹՅՈՒՆԻՈՐ ԱՆՍԱՄՈՒՆՆԵՐԸ

Ընտանի կենդանիները ապրում և բաղմանում են մարդու ձեռքի տակ, նորա հսկողութեան ներքոյ: Ներկայումս գոյութեւն ունին մինչև 50 տեսակ զանազան ընտանի կենդանիներ: Մի կողմ թողնելով միւս տեսակները, այստեղ կաշխատենք նկարագրել միմիայն ամենակարեղքներից երկրագործի յոյս և անբաժան ընկեր՝ խոշոր եղջիւրաւոր անասունների կեանքը իւր ըուր կողմերով:

Նախնական մարդը ընտանի անասունների հետ այնպէս շեր վարում, ինչպէս այժմ: Նա պաշտպանում էր իր անասուններին միմիայն արտաքին թշնամիների յարձակումներից, քաղցից և պատոպարում վատ եղանակներից, իսկ այժմ մարդը երբե սեփականատէր, ուշք է դարձնում նոյն իսկ ամենաչնչին երեւոյթների վերայ: Ներկայումս մարդը ընտրութեւն է անում ընտանի անասունների մէջ, վատերը ջոկում է և աշխատում ոչնչացնել, իսկ սերունդը բաղմացնելու համար ընտրում է ամենաառողջ և ընտիր տեսակները, մի քանիսի համար նշանակում է մի տեսակ կեր, միւսների համար մի այլ տեսակ, մի ձագին մի կերպ է խնամում, միւսին մի ուրեմն կերպ և այլն. մի խօսքով ներկայումս կամենում է ընտանի անասուններից մի արհեստանոց կամ գործարան կազմել, որտեղից կարողանայ ստանալ իւր ուղածին պէս այս կամ այն օդտակար ըերբը, արդիւնքը:

Ժամանակի ընթացքում մարդուս դէպէ իւր անասուններն ունեցած վերաբերմունքը զգալի կերպով փոխուեց. Նորա պատճառը դլխաւորապէս աղդաբնակութեան խիստ բաղմանալն էր, երբ մնունդի մեծ կարիք զգալով, աշխատեց օդտուել ընտանի անասուններից:

Մարդիկ ընտանի անասուններ պահում են երկու նպատակով. կամ իրենց այս կամ այն պահանջներին գոհացում տալու և կամ բաղմացնելու համար: Նատ անդամ միենոյն կենդանին

յիշեալ երկու նպատակների համար էլ կարող է ծառայել, այսինքն կարելի է և աշխատեցնել, ինչպէս այդ կամենում է ինքը տաւարատէրը և միենոյն ժամանակ ոեցունդ բազմացնել:

Խոշոր եղջերաւոր անասուններից մարդ կարող է օգտութել զանազան մշջոցներով՝ կամ իրքեւ շարժող ոյժ, այսինքն իրքեւ ըեռ-նակիր կամ լծկան և կամ ինչպէս վերեն ասացինք, կարող է ստանալ այս կամ այն կարեւոր արդիւնքը: Առաջին նպատակի համար գործադրուող կենդանին կոչւում է աշխատաւոր, իսկ երկրորդը՝ արդիւնքեր: Մեղանում, հայերիս մէջ, մեծ եղջերաւոր անասուններից իրքեւ աշխատաւոր ճանաչուած է եղը, գոմէշը: Կան նաև այնպիսի երկրներ, ուր կովերին և մատակներին (քածեր) ևս լծում են թեթև ըեռ ջաշելու համար, բայց այս լաւ ըան չէ, որովհետեւ որքան ուղում է թեթև լինի աշխատանքը, այնուամենայնիւ նրանց կաթը կպակասի, նրանք ֆիզիքապէս կտկարանան և շատ ուրիշ վնասներ կյառաջանան: Արդիւնաբեր անասունների մէջ կան այնպիսիները, որոնց տուած արդիւնքը միմիայն միսն է: Նշանակում է այգապիսիները կենգանութեան ժամանակ հազիւթէ որ և է օդուտ կարողանան տալ: Մինչզեռ կան այնպիսիները, որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքում տալիս են մարդուն այս կամ այն ըերքը՝ կաթ, իւղ, պանիր և այլն: Բացի այս ըերքերից, երկրագործը, իւր արտերը կանոնաւոր մշակելու, պարարտացնելու համար, պարտաւոր է ընտանի անասուններ պահել՝ նրանցից աղք ստանալու համար, թէպէտ շատ անգամ անուղղակի կերպով ստացուած այդ գանձը մեր գիւղացիները բացի վառելու համար արար պատրաստելուց, ուրիշ ոչ մի բանի չեն գործածում:

Խոշոր եղջերաւոր անասունները բազմատեսակ են լինում: Այդ տեսակներն յառաջացնող պատճառները շատ շատ են, որոնցից գլխաւորը տարբեր տեսակի եղջերաւոր անասունների զուգաւորութիւնն է: Փոփոխութիւն յառաջացնելու մէջ պակաս դեր չեն խաղում նաև զանազան երկրների կլիման, մնունքը և պահպանութեան եղանակը: Տեսակների զանազանութիւնը շատ պարզ նկատում է հինգ նոյն իսկ նոցա մարմնի կազմուածքի տարբեր ձեւից ու մեծութիւնից, տուած կաթի թէ քանակութեամբ և թէ յատկութեամբ տարբեր լինելուց և նոյնպէս մարմնի ծանրութիւնից: Կան 10—50 լի: Ճանքութեամբ կոլիեր:

Թէպէտ հայերն ես, մանաւանդ կովկասում, շատ տեսակ խոշոր եղջերաւոր անասուններ են պահում, բայց ընդհանրապէս նոցա մէջ ամենից շատ տարածուածը հատարակ տեսակն է, որ շատ դիմացկուն է: այդ երեսում է նրանից, որ շատ անգամ

նորա ամբողջ օրերով ցըտի տակ են մնում և պառկում նոյն խել սառած դեանի վերայ առանց փոռւաձքի, որը հալչում է նոցա մարմնի տաքութեան ազգեցութիւնից և յետոյ մինչեւ ծնկները խրւում դորա մէջ: Այսպիսի պայմաններում կենդանին ոչ միայն դեռ շարունակում է ապրել, այլ նաև բազմանում և կաթ է տալիս: Եթէ մեր դիւզերում տարածուած այդ եղջիւրաւոր անասուններին լաւ կերակրեն և բարեյաջող պայմանների մէջ դնեն, շատ կարճ ժամանակուայ մէջ նոցա տուած թէ կաթի քանակութիւնը և թէ մարմնի քաշը կըարձրանայ: մանաւանդ եթէ մեր այդ հասարակ կովերը դուգաւորուեն ընտիր, ազնիւցեղի ցուլերի հետ, բացի վերոյիշեալ օգուաներից, կոտացուի նաև լաւ սերունդ: Բայց որպէս զի սերունդը բոլորովին բարեփոխուի, ազնուանայ, որպէս զի ապագայում խիստ կաթնոտ կովեր, լաւ աշխատող եղներ ստացուի, պէտք է որ կոլն (մայրը) ևս ընտիր տեսակից լինի:

Յուլ, լաւ և ազնիւցեղի խոշոր եղջիւրաւոր անասուններ ունենալու համար, պէտք է պահել ազնիւ և ընտիր տեսակի ցուլ, որովհետեւ կենդանիները երենց յատկութիւնների մեծ մասը հօրից են ստանում և ուրեմն պէտք է ցուլը լաւ պահուի, կանոնաւոր մնունդ ստանայ, որ կարողանայ տարեկան 70—100 ազնիւ սերունդ յառաջացնել: Կրկնում ենք, որ ցուլը պէտք է անպատճառ յառաջացած լինի լաւ, առողջ և ուժեղ սերունդից, որպէս զի իւր ի ծնէ ստացած, ժառանգած լաւ յատկութիւնները ճշառութեամբ կարողանայ հաղորդել յաջորդ սերունդին և այդպիսով ծնունդները ազնուանան: Ցուլը պէտք է լինի աւելի խոշոր, յաղթանգամ, ուժեղ, գեղեցիկ կազմուածքով, կարճ գլխով, լայն ճակատով, երկար և մազոտ ականջներով, սև, ուղիղ և երկար եղջիւրներով, մեծ, պայծառ և սև աչքերով և որամիտ ու կատաղի նայուածքով: գունչը պէտք է լինի մեծ, քիթը կարճ և ուղիղ, վիզը լայն և հաստ, ուժեղ և խիտ մկաններով: բունը երկար, կուրծքը և որովայնը լայն, թիկունքի (մէջը) ստորին մասը պնդակազմ, սրունքը մեծ և մտոտ, պոչը երկայն և մազոտ, մանաւանդ ծայրը և ամբողջ մարմինը կարմրադոյն: առաջին ստները աւելի ուժեղ պէտք է լինին և ունենան լայն և ամուլ յօդեր: յետին ստներն ես պէտք է ամուլ կազմութիւն ունենան և լաւ դասաւորուած լինին, քայլերն արագ և ազտատ, համարձակ:

Եթէ ցուլը մանը տեսակիցն է, խոշոր չէ, մինչեւ երկու տարեկան հասակը չպէտք է թողնել կովերի մէջ: մինչդեռ խոշոր տեսակի ցուլը ծնուելուց  $1\frac{1}{2}$  տարե յետոյ կարելի է: Եթեկը

չպէտք է ցուլին վաղ թողնել նախիրի հետ, որովհետև վաղ մերձաւորութիւնը օգտակար չէ կարող լինել։ Խիստ մատաղ անառուններից սովորաբար մանը սերունդ է յառաջանում։ Մերձաւորուելու համար ամենայարժմար և լաւ հասակը համարւում է երրորդ, չորրորդ և հինգերորդ արթիները, որից յետոյ կենդանին թուլանում է և անզօր է դառնում։

Ամէն մի անասնաաիրոջ պարտականութիւնն է աշխատել իւր անասունները ազնուացնել, որի համար, կրկնում ենք, պէտք է ունենալ ընտիր ցուլեր։ Ահա այս նպատակն աչքի առաջ ունենալով գիւղացիներից մի քանիսը միասին կամ ամէն մի գիւղական հասարակութիւն կարող է որոշ գումար փող վեր գալով գիւղատնտեսի կամ անասնապահութիւնից լաւ հասկացող մէկի ձեռքով կամ խորհրդով մէկ կամ մի քանի, նայած կարելին, ազնիւ ցեղի պատկանող ցուլեր գնել։ Գնելու կամ տանը եղած հորթերից ցուլեր հասցնելու համար պէտք է ուշադրութիւն դարձնել, որ նոքա համապատասխան լինին իւրեանց ապագայ կոչմանը, որի համար կարեոր է միշտ աչքի առաջ ունենալ վերեւում յիշուած կանոնները, որոնց մէջ ամենից կարեորն այն է, որ հորթը ազնիւ ցեղից, այն է լաւ ցուլից և կովից յառաջացած լինի։

**Կալ.** Ամէն մի կովատէր մի որոշ նպատակ ունի և պէտք է աշխատի անպատճառ իւր այդ նպատակին համնելու։ Նպատակը կարող է լինել կովից միմիայն կաթ ստանալը (մանաւանդ, երբ կաթը լաւ գնով է վաճառւում) և կամ իւղ, պանիր պատրաստելը, երկիրը մշակելու համար աշխատաւոր եղ հասցնելը, իրեւ մսացու՝ եղ, կով գիրացնելը, սերունդ յառաջացնելու կամ ծախելու համար հորթեր մեծացնելը և այլն։ Բայց որպէս զի ամէն մի կով օգտակար, արդիւնաւոր և վերջապէս նպատակայարմար լինի, պէտք է որ, բացի ցուլից, ինչպէս վերևն յիշեցինը, նաև յառաջացած լինի ազնիւ ցեղից, որպէս զի կարսղանայ ոչ միայն արդիւնաւոր լինել իւր տիրոջ համար, այլ և, որ ամենադրվագաւորն է և էականը, առողջ, ուժեղ և ընտիր սերունդ յառաջացնել։ Լաւ կովերի մալմնի ձեր և ցեղական արտաքին առանձնայատկութիւնները հետեւեալներն են։ Կենդանու մարմնի մասերի ներդաշնակութիւննը, այսինքն առաջին մասը՝ կութքը, միջին մասը՝ որովայնը և յետին մասը՝ գաւակը պէտք է երկարութեամբ միմեանց հաւասար լինեն, գլուխը պէտք է լինի երկար, ականջներն են երկար, եղջիւքները բարակ, քնքոյշ և ուղիղ, աչքերը մեծ-մեծ և արտայայտիչ, վիզը երկար և բարակ, թիակներն աւելի բարակ քան ցուլինը և ունենան բաւականին

զօրեղ մկաններ։ կուրծքը պէտք է լինի լայն և տակառաձեւ, այսինքն առաջեւ կողմից մինչեւ որովայնի կէս մասը պէտք է աստիճանաբար ուռած, բարձրացած լինի, իսկ այնտեղից մինչեւ աճուկները նոյն աստիճանաւորութեամբ ցածրացած։ մէջը պէտք է լինի ուղղված, բունը երկար և լայնածաւալ, գաւակը լայն և բարձր, պոչը կանոնաւոր, բարակ։ կտշին քնքոյշ և նուրբ մաղերով ծածկուած։ ամրող կազմուածքը քնքոյշ պէտք է լինի։ ուսները բաւականին բարակ, լայն և լաւ կանոնաւորուած յօդերով։ Բացի այդ ընդհանութ յաճախ խաբուսիկ նշաններից, կաթնոտ կովերը պէտք է ունենան երկար և լայն, մերկ և քընքոյշ մանրիկ մաղերով ծածկուած ստինք (կուրծ), որ կթելուց առաջ ծգուած, ուռած է լինում, իսկ կթելուց յետոյ եջած, թարշամած։ Նոշափելիս ստինքը պէտք է ճարպոտ երեայ։ Վերջապէս շատ դէպքերում կաթնոտ լինելու ամենալաւ նշանն է համարւում «կարի նայելին» (молочное зеркало) <sup>4)</sup>։ Խնչպէս ստինքի՝ նոյնպէս և ամրող մարմնի վերայի մաղերը ուղղուած են լինում դէպի ներքեւ, բայց ստինքի, շեքի և աճուկների մէջ եղած ծալքերի վերայի մաղերը ուղղուած են լինում մեշտ դէպի վերեւ։ այնտեղ, ուր այդ մաղերը հանդիպում են դէպի ցած ուղղուած մաղերին, ստացւում է մի երեղ, որը շըջապատում է մի տարածութիւն, որ կոչում է «կարի նայելի»։ Ուրեան մեծ լինի հայելին, այնքան աւելի կաթնոտ կլինի կովը։ Բայց պէտք է ասել, որ այս դէպքում ևս բացառութիւն է լինում։ Կովի կաթնոտութեան ամենալաւ շըջանը 4-8 տարեկան հասակն է, շատ քիչ դէպքերում միայն մինչեւ 10 տարեկան։

Այս բոլոր նշանները այնքան էլ հաստատուն փաստ լինել չեն կարող կովի կաթնոտութեան։ ամենից լաւ և գիւրին միջոց համարւում է ուղղակի կովին կթելը։

Ամեն մի կովատէր պէտք է առաջնորդուի այն սկզբունքով, որ լաւ է պահել մի հատ լաւ, աղնիւ ցեղի պատկանող խոշոր կաթնոտ կով, որ տալիս է տարեկան մօտաւորապէս 250 վեգրօ կաթ, քան երկու հասարակը, որ միասին կազող են տալ միայն 250 վեգրօ։

Խոկապէս լաւ կաթնոտ կովը նո է, որ տարեկան տալիս է իւր մարմնի քաշից հինգ անգամ աւելի կաթ։ Սովորաբար ընդունուած է, որ լաւ կովը երկու գրուանքայ խոտից և կամ նոյնչափ սննդաբար նիւթեր պարունակող մի ուրիշ կերից պատրաստում է մի գրուանքայ կաթ։

1) Գենոնի եղանակով։

Սովորաբար ծնելու օրից մի քանի ժամանակ յետոյ (ճիշտը որսշելը գժուար է) կովի կաթը սկսում է պակասել, որովհետև մօտաւորապէս երկրորդ, երրորդ ամիսներում կովը նորից յզանում է: Առհասարակ յղի մնալուց յետոյ կան կովեր, որոնց կաթը առտիճանաբար է պակասում, կան կովեր, որոնց կաթը արագ կերպով և կան այնպիսիները, որոնց կաթը հէնց ուղղակի յզանալուց յետոյ անմիջապէս դադարում է: Եթէ կովը յզացած չէ, բայց սկսել է պակասեցնել իւր կաթը, այդ նշան է նրա գիրանալու, նա այլ ես առատ կաթ չի տայ, հետեւապէս և նրան պէտք է համարել անպէտքացած:

Պէտք է միանդամ ընդ միշտ կանոն դարձնել, որ մանր տեսակի երկու տարեկանից և խոշոր տեսակի 1½ տարեկանից վորք երինջը երբէք ցուլի չդան:

Գիւղացիները և առհասարակ եղջիւրաւոր անասունների տէրերը չպէտք է անարգել կերպով թողնեն կովը կամ երինջը ամէն մի պատահական ցուլի մօտ, այլ նաև պէտք է ուշադրութիւն դարձնեն, որ ցուլը բացի աղնիւ ցեղի պատկանելուց, իւր արտաքին ձեռով և յատկութեամբ (իւր ցեղին յատուկ) աւելի նման լինի աճեցման համար իրենց ընտրած երինջին: Խիստ ընտրութիւն պէտք է անել նաև երինջների մէջ և այդ նպատակի համար ընտրել պէտք է այնպիսիները, որոնք աչքի են ընկնում վերեւում յիշուած մարմնի արտաքին ձեռքով և ցեղական առանձնայտակութիւններով:

**Եզ. Վաղ հասակում (մինչեւ ½ տարեկան հասակը)** եղներին ներքինացնում են, կոտում են, որպէս զի երբ նա երկու տարեկան լինի՝ աշխատեցնեն: Այս հասակից փոքր եղին չպէտք է աշխատեցնել, որովհետեւ մեծանալուն շատ արգելք կարող է լինել: Նատ տեղերում եղը աւելի ձեռնտու է աշխատութեան համար, քան ձին. սորա պատճառները հետեւեալներն են. ա) եղ պահել, ինսամելը աւելի հեշտ է. բ) եղի գինը համեմատաբար ձիուց աւելի արժան է, սանձի և այլ սարքերի ծախը չունի. գ) եղներից աւելի մեծ քանակութեամբ աղք է ստացւում և այդ աղքով կարելի է պարարտացնել ամենայն տեսակ հող, մինչդեռ ձիու աղքը մի քանի տեսակ հողերի համար վնասակար է ճանաչուած. դ) եղը մանր աշխատութեան աւելի դիմացող է և համբերող. նա աւելի քիչ է վնասուում, աւելի քիչ հիւանդութեանց ենթակայ է, քան ձին. ե) աշխատութեան համար անպէտք ճանաչած եղներին կարելի է դարձեալ մեծ դնով վաճառել, միայն թէ հարկաւոր է առաջուց լաւ կերակրել, գիրացնել,

որով վատ աշխատաւոր կենդանուց կատացուի լաւ մսացու եղ:

Լաւ և ընտիր աշխատաւոր եղը պէտք է ունենայ երկար և ծանր գլուխ, մսու և չափաւոր երկարութեամբ վիզ, բարձր տրցակ (ճակատի քանքիւլ), լաւ զարդացած կուրծքք առհասարակ կը ծուկը ողնաշարից որքան ցած լինի ընկած և կամ որքան խորը լինի կուրծքք, այնքան մեծ կլինի այն տարածութիւնը, ուր թոքերն են տեղաւորուած և այնքան աւելի եղը պէտքական կլինի աշխատանքի: Հաստատուն և համարձակ քայլերի համար անհրաժեշտ են լայն կուրծքք, հաստ, ոոկրոտ և ուղիղ գրուած ոտներ՝ ծնկի լայն ջօղերով և մեծ ու լայն կճղակներով. վերջերը անպէտք համարուած եղներին մսացուի համար լաւ կերակրելու ժամանակ ուշադրութիւն պէտք է գարձնել, որ նոքա ունենան լաւ մսացու անասունի կազմուածքի վայելուչ ձեւ. այսպէս օրինակ, լայն գաւակի ոսկը և այլն:

Եղի կատարած աշխատութեան չափը հաշուի առնելիս, սովորաբար ընդունում են, որ հորիզոնական ուղղութեամբ քաշելիս նա առանց նեղուելու տանում է մի բեռ, որ իւր սեփական մարմնի քաշին է ժաւասար՝ մօտաւորապէս 25—30 փ: Խւրաքանչիւր աշխատութեան միջոցին եթէ եղը  $2\frac{1}{2}$ —3 ժամ՝ հանգստութիւն վայելէ, այն ժամանակ ամրանը կարող է օրական 10 ժամ աշխատել, գարնանը և աշնանը՝ 8 ժամ, իսկ ձրմքանը՝ 7 ժամ (հաշուելով տարուայ մէջ 160—250 աշխատանքի օր): Նատերը երկիւղ կրելով եղների սաստիկ յոդնածութիւնից, աշխատեցնում են նրանց փոխ առ փոխ բայց այդ միջոցը թանկ է նատում, որովհետեւ այդպիսի գէպքում ստիպուած կլինին թուով երկու անդամ աւելի տաւալ պահել: Պէտք է ասել որ այսպիսի վարմունքը ոչ մի անհրաժեշտութիւն չի ներկայացնում, եթէ միայն, ինչպէս վերևն ասացինք, եղներին հանգստութեան որոշ ժամանակ տրուի երեկոյի և առաւտուայ միջոցում, որպէս զի այդպիսով հեշտութեամբ թթուածին հաւաքուի կենդանու մարմնի մէջ՝ հետևեալ օրուայ աշխատութեան ժամանակ ծախսելու համար:

Եթէ եղներն աշխատում են դութան կամ բեռ քաշելով, որի ժանրութիւնը նոցա մարմնից երկու անդամ աւելի է, այն ժամանակ մի բոպէտմ 150—170 ոտնաշափ կամ մի ժամում  $2\frac{1}{2}$ —3 վերստ տարածութիւն հաղիւ անց կենան, թէպէտ երբեմն բացառիկ գէպքում այդ տարածութիւնը հասնում է մինչև 6 և նոյն իսկ 7 վերստի: Եղը կարող է մինչեւ անդամ շարժել աւելի մեծ ժանրութիւն, մինչեւ իսկ իւր կենդանի քաշից 15—20 անդամ աւելի, բայց այդպիսի ժանրութիւնը նրան ուժասպա-

է անում և նրա մարմնի կազմուածքի վրայ հիւծող, մաշող աղոցցութիւն ունենում:

Եթե աշխատաւոր կենդանի եղը պէտք կդայ 4—15 տարեկան հասակը, բայց աւելի արդիւնաբեր է նորա աշխատանքը 5—10 տարեկան հասակում:

Եղներին լծում են սայլերին լուծերի օդնութեամբ, որոնք լինում են երկու տեսակ՝ զգի, որ շատ տարածուած է մեղանում և գլխի կամ եղջիւըների, որ տարածուած է արևմտեան եւրոպայում: Անպայման աւելի նպատակայարմար է վերջին տեսակը:

### Գիւրգ Պագարեան

